

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի 4-րդ կետի տեղեկացնում եմ, որ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

Կից ներկայացնում եմք խորհրդի որոշման քաղվածքը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց»


պետական ոչ առևտրային կազմակերպության

խորհրդի նախագահ՝

Բ. Ասլանյան

Է. Բաղդասարյան

29.05.2019թ.



ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի մայիսի 27-ի նիստի թիվ ~~12~~ արձանագրությունից.


Օրակարգում. 1. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի հուլիսի 26-ին, ժամը 14⁰⁰-ին:
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց»-ում մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 18.06.2019թ.- 17.07.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10⁰⁰-15⁰⁰, բացի ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 13.06.2019թ. -ին, երկրորդը՝ 18.06.2019թ.-ին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահի վրա:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ  Է. Բաղդասարյան

29.05.2019թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր): Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
 1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
 2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
 3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) պատճենը
 4. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
 5. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
 6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 18.06.2019թ.- 17.07.2019թ. ամեն օր ժամը 10⁰⁰-ից մինչև 14⁰⁰, բացի ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի հուլիսի 26-ին, ժամը 14⁰⁰-ին՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թեոչերի 1) կամ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ /հեռ. 093322343/:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴԴՐՈՑ» ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ